

ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի 22-ն ամսոյս Վ.Ե.Տ. Հայրապետ ի Բիւրականէ վերադարձաւ ի Ս. Էջմիածին:

ՀԱՆԴԷՍ

ՏՕՆԱԲՄԲՈՐԲԵԱՆ ԱՆՈՐԱՆ

ՎԵՐՈՒՄ ՀԱՅՐԱՊԵՏ ԸՄԵՆԱՆ ՀԱՅՈՑ

Տ Տ ԳԷՈՐԳՍ Դ

ԵՒ ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԵԴԱՐՁԻ

ԲԱՅՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԵՈՑ ԷՋՄԻՇՆԻ.

Ի 25-ն Սեպտեմբեր ամսոյս՝ յաւուր տօնի սրբոյն Գէորգայ Զօրաւարի՝ Վեհափառ եւ Սրբազնագոյն Հայրապետի ամենայն Հայոց Տ, Տ, Գէորգայ Դ, Կաթողիկոսի Անուան Տօնախմբութիւնը եւ Մայր Աթոռոյս ձեմարանի բացման երկրորդ Տարեդարձը արժանաւոր եւ մեծաշուք հանդիսիւ կատարեցաւ:

Յայտնի է որ ձեմարանի սկզբնական օրհնութեան եւ բացման հանգէտը առաջին անգամ կատարուած էր 1874-ին Սեպտեմբերի 28-ին. այնուհետեւ մինչեւ յաջորդ տարին, այս ինքն մինչեւ ձեմարանին հրդեհեալ մասին նորոգման աւարտիլը, աշակերտք սուրբ Էջմիածնայ Ղազարապատ անուանեալ մասին մէջ պատասպարուած լինելով՝ առաջ տարին ըստ կարի իրենց ուսումն ու կրթութիւնը՝ մէկ նախակրթարան եւ երկու դասարան բաժանուած: Իսկ ան-

ցեալ 1875-ին Յունիսի 10-ին փոխադրուելով ի վերանորոգեալ շինուած ձեմարանին, աշակերտք երեք դասարան բաժանուեցան՝ առանց նախակրթարանի, եւ այնուհետեւ աւելի կանոնաւոր կերպիւ սկսաւ ձեմարանին ուսումնական ընթացքը՝ այնպիսի կարգադրութեամբ, որ իւրաքանչիւր տարի մէկ մէկ նոր դասարան բացուելով՝ վեց տարուան մէջ՝ վեցերորդ դասարանի աշակերտները կարողանան աւարտել Դպրանոցական ուսմանը, եւ այնուհետեւ սկզբնաւորութիւն լինի ձեմարանական բարձրագոյն դասախօսութեանց:

Անցաւ մէկ տարի եւս, եւ ահա Սեպտեմբերի 25-ին երկրորդ տարեդարձը կատարեցաւ, բայց կարելի է համարել այս անցեալ տարին զօրութեամբ առաջին տարի ուսմանց ձեմարանիս, որովհետեւ այժմ՝ կարելի եղաւ գրեթէ աւելի բացայայտ կերպով իմանալ՝ որ հաստատուէն յոյսեր կան ձեմարանին անխափան յառաջանալուն եւ իւր գեղեցիկ նպատակին հասնելուն ի դէպ ժամանակի՝ եթէ անակնկալ կերպիւ արտաքին հզօր արգելքներ չծագին:

Տարեկան հարցաքննութիւնները եղած էին մասամբ Յունիս ամսոյն սկիզբները, եւ մասամբ Օգոստոսի վերջերում: միշտ ի ներկայութեան Վերատեսչին եւ վարժապետաց, ըստ այնմ՝ եղաւ դասարանաց փոփոխութիւնը եւ բացուեցաւ չորրորդ դասարան. իսկ կանոնաւոր դասառութեանց սկզբնաւորութիւնը եղաւ Սեպտեմբերի 1-ին՝ երբ եկան հասան բարձրագոյն դասարանաց համար հրաւիրեալ նոր վարժապետները:

Ձորորդ դասարանին բացուելովը կարելի եղած էր այս տարի առաջին դասարանին մէջ մնացող աշակերտաց թիւը լրացնել՝ ընդունելով 20-ի չափ նորեկ աշակերտներ՝ Տեսչութեան հրատարակած պայմաններուն համեմատաւով բոլոր աշակերտաց թիւը, որ հերու 70-էն աւելի չէր, եղաւ 95, եւ թէպէտ հարիւրաւոր խնդրատուք եւս ցանկացան ի ձեմարանն մտնելու, բայց կարելի չեղաւ առ այժմ՝ ընդունել շինուածոյն համեմատաբար անձուկ լինելուն՝ պատճառաւ:

Արդ սրբոյն Գէորգայ Զօրավարի տօնին օրը*) զկնի առաւօտեան ժամերգութեան՝ բոլոր Միաբանք եւ ձեմարանական աշակերտք, Սինոդական եւ քաղաքական պաշտօնատեարք եւ ուրիշ բազմաթիւ պատուաւոր անձինք՝ ինչպէս նաեւ Վաղարշապատայ օրիորդաց եւ արականաց դպրոցաց աշակերտք եւ այլն, յետ կատարման վաղեմի սովորական Մաղթանաց վասն Հայրապետի ամենայն Հայոց՝ ներկայացան Վեհափառ Կաթողիկոսին օրհնութիւնը առնելու՝ Ս. Աջր համբուրելով եւ շնորհաւորելով (մեր Վեհ. Հայրապետի) անուանակոչութեան տօնը**): Սուրբ Պատարա-

(*) Նաև նախընթաց աւուր յերեկոյեան ժամերգութեան՝ ի պատիւ Վեհ. Հայրապետի մերոյ՝ և ի փառս սրբոյն Գէորգայ՝ արժանաւոր շքով և հանդիսիւ՝ նախատօնակ կատարեցաւ:

(**) Այս առթիւ ձեմարանի և օրիորդաց ծիւղաբոցի աշակերտաց ի զմաց մի մի ճառ կարդացուեցաւ, զորս արժան կհամարվիք ի ստորև հրատարակել:

գէն յետոյ (զոր մատոյց Գեր. Վերատեսուչն ձեմարանի Տ. Գաբրիէլ Սրբազան Արքեպիսկոպոս) բոլոր եկեղեցական դասքն զգեստաւորեալք եւան թափորապէս ի Տաճարէն սրբոյ Եջմիածնի եւ սրբոյն Գէորգայ շարականը երգելով՝ գնացին ի ձեմարան: ձեմարանի մեծ դրան առջեւը կամարակապին ներքեւը սլաորաստուած էր Վեհափառ Հայրապետի համար բարձրաւանդակ Պահլ. Նորին Վեհափառութիւնը այն գահին առջեւը կանգնած էր՝ երբ թափորը մրտաւ ձեմարանին ընդարձակ գաւիթը՝ երգելով սրբոց թարգմանչացն մերոց շարականը: Յետ այնորիկ եկեղեցականք շուրջանակի պար առեալ կատարեցին պաշտօն հանդստեան վասն հոգւոց ծրնոցայ Վեհափառ Հայրապետի մերոց հիմնադրի ձեմարանին, ինչպէս որ հաւանութեամբ Վեհապետիս սահմանած է կատարել այն պաշտօնը ամեն տարի նոյն օրը ի հանգիստ հոգւոց բարեյշատակ ծնողացն իւրոց, եւ այլն:

Կանչուած էին օրուան հանդիսին վայելչութիւնը աւելցնելու համար նա եւ զինուորական նուագաձուներ, որ այն միջոցին իրենց նուագարսմները դարկին՝ մինչեւ որ ժամարարը եւ միւս եկեղեցականք իրենց զգեստները հանեցին ներս, եւ եկան շարուեցան ըստ կարգի Վեհափառ Կաթողիկոսի երկու կողմը՝ այն ատեն ձեմարանին Վերատեսուչ Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոսը կարգաց իւր ճառը, զոր ամբողջ կգնեմք այս տեղ:

Ճառին ընթերցմանէն վերջը աշակերտք զանազան երգեր երգեցին, եւ

մէջ ընդ մէջ կարգացուեցան վարժապետաց եւ աշակերտաց յօրինած ոտանաւորները ի խորհուրդ օրուան հանդիսին: որոց հրատարակութիւնքը եւս արժան կհամարիմք:

Ի վերջ ամենայնի Վեհափառ Հայրապետ ոտք ելաւ եւ իմաստալից եւ սրբտաշարժ խօսքերով յայտնեց իւր հայրական սրտին ուրախութիւնը զոր կրդգար՝ տեսներով իւր բազմամեայ փափաքանաց (այս ինքն կանոնաւոր եւ ընդարձակ եկեղեցական Ուսումնարան կանգնելուն եւ յաջողելուն) կաարուելու մեծամեծ յոյսերը: Յուսադրական բանիւք կքաջալերէր ոչ միայն ձեմարանի կառավարիչները, այլեւ ժողովականքը եւ բովանդակ մեր Ազգը որ քաջալերուին, սիրտ առնուն, եւ իրեն պէս չվհատելով ամենեւին յերեսաց պէս պէս դժուարութեանց՝ աշխատել որ այս ձեմարանը հասնի իւր վսեմ՝ ազգաշահ եւ կենցաղօգուտ նպատակին, եւ Հայրապետական օրհնութիւնը տալով արձակեց հանդիսականները: Իսկ նոքա ելան ձեմարանին ութանկիւնի մեծ հանդիսարանը, որոյ ճակատը զարդարուած էր Վեհափառի մեծադիր իւզաների կենդանագրովը, եւ այն տեղ զննեցին աշակերտաց բազմաթիւ գծագրութիւնները եւ նկարները, եւս հայերէն եւ ռուսերէն վայելչագրութեան օրինակները: Այս ազգային հանդէսը վերջաւորեցաւ յերեկոյնի գեղեցիկ լուսավառութեամբ Վեհարանին, Վանքին եւ ձեմարանին, եւ զանազան հրարուեստական խաղերով ու նուագարաններով մինչեւ ուշ ժամանակ:

Կմնայ մեզ մաղթել Վեհափառ Հայրապետի մերում երկար կեանք եւ յաւելում այսպիսի ուրախութեանց եւ մըխիթարութեանց ի փառս Աստուծոյ եւ յօղուտ եւ ի պայծառութիւն Հայաստանեայցս առաքելական սուրբ Եկեղեցոյ:

Ահաւասիկ ձեմարանի Գեր. Վերատեսչին ընթերցած ճառը:

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ,

ԱՍՏՈՒՆՈՒԹԵՐԵՒԷԼ ՀԱՅՐԱՊԵՏ:

Զի՞նչ ինչ քաղցրագոյն կայցէ յաշխարհի որոց միանգամ յուսովն վատակիցին՝ քան զտեսանել՝ թէ եւ բացուտ ի բաց՝ զարդեանց աշխատութեանցն իւրեանց զբարենշան զբազմաբեղուն արգասիս: Զայս քաղցրութեան եւ զբերկրառիթ ուրախութեան առեալ այսօր եւ մեր զճաշակ՝ ողորմութեամբ Բարձրելոյն՝ ի գործ տեսչութեան Գեորգեան ձեմարանիս Սրբոյ Էջմիածնի, համարձակիմք աւասիկ լի հրճուանօք հրաւեր կարդալ ոչ միայն սրբագումար Ուխտիս միաբանութեան Հարց եւ Եղբարց բարեօրաց, այլ եւ համօրէն ամենայն որդւոց հարազատից Հայաստանեայցս սուրբ Եկեղեցոյ՝ հաղորդս մեզ հանդիսանալ ի խնդութեանս մերում: Եւ արգեօք կարի իսկ յիրաւունս:

Վեհափառ Տէր, տեսանէք աւասիկ շուրջ բոլորեալ երամսլին զՁերովդ Աթոռով զայնոսիկ յորգեկացն Ձերոց՝ յորդւոց Հայաստանի, յորոց ի գլուխ հեղէքն առատապէս զհայրապետակա-

նին Չերոյ զօրհնութեան զցօղ զուարթարար անդատին ի սկզբանէ, եւ մանաւանդ յառաջնումն տարեգարձի բացման հոյակապ ձեմարանիս: Տեսէք արդ յերկրորդումն, տեսէք սրբան աճեցին եւ արգասաբերք եղեն ի հոյովել տարեկան շրջանիս՝ շնորհիւ անդուլ ազօթից, եւ անթերի խնամոց Հայրապետիդ մեծի եւ անխոնջ վաստակովք աշխատաւորացն առ ի Չէնջ կարգելոց եւ ցանգ ի յառաջադէմն նկրտել խրախուսելոց:

Է ինչ ապաքէն ի տեսարանս այսպիսիս, Վեհափառ Տէր, որ ակներեւ առաջի կայ ամենեցուն, որպէս աճումն թուոյ սանուցդ որդեգրելոց Մայր Աթոռոյս, հանդերձ քաջառողջ կենդանութեամբ նոցին եւ զուարթածաղիկ գոհութեամբ սրտի, եւ է ինչ գարձեալ՝ որ յաւէտ նշմարի հոգւոց՝ որոց ոչ կարծեօք ինչ եւ ոչ վեր ի վերոյ, այլ ճշդիւ գտակաւ հմտացեալ իցեն դաստիարակութեանն արուեստի: Արդ ներեսցէ ինձ Չերդ Վեհափառութիւն զերկաքանչիւրդ աղգ յառաջադիմութեան երեւութացեալ ի Չերում՝ դաստակերտիս՝ պարզել ըստ կարի աստանօր ի մեծահանդէս աւուրս տօնի առաջի յոգնախոռուն ակմբիս, ոչ ի սնտաի ինչ պարծանս խաբէութեան, եւ ոչ զմարդահաճոյից ամանց բերել կամելով զամօթապարտ կերպարանս, այլ իբր զհամարատուութիւն տնտեսի հաւատարմի՝ կոչեցելոյ ի Տեսունէդ իւրմէ յայս գործտաժանական, բայց աստուածահաճոյ եւ աղգային:

Ապաքէն ոչ ըստ չափու մեծութեան շինուածոյ վայելչակերտ ձեմարանիս էր

ի հերուն թիւ աշակերտաց սորին՝ ըստ պէսպէս պատճառաց. որոց առաջինն եւ գլխաւոր այն իսկ էր՝ զի չէր մարթանդէն ի սկզբանն բացումն առնել բաղում դասարանաց միանգամայն. որոյ վասն որք ի հերուն չէին ինչ աւելի քան զվաթսուն եւ վեց, այսօր եղեն իննսուն եւ հինգ աշակերտք. թող եւ զբազմութիւ պատանիս ցանկացողս այսր մտանել, ոչ ի չքաւորացն եւեթ դասուէ, այլ եւ ի խոստացողացն զհաշտ հատուցանել տարեւորական, զոր իրաւամբ չներեն այժմու կանոնք ձեմարանիս: Եւ յետինս այս երեւոյթ՝ զարմանալի իմն թուեցեալ յաչս յօրովից՝ զի՞նչ իցէ, եթէ ոչ գործնական եւ սպառսպուռ փարատումն կասկածին երկիւղի այնոցիկ ի բարեմիտ մարդկանէն, որք համարէին՝ թէ ոչ որ ոչ ուրեք հաւան գտցի երբէք տալ զորդիս իւր յաշակերտութիւն ձեմարանիս, թէ եւ յրեւոյթ (բարէ, բարէ), թէ եւ ձրիաբար առնուլ զնոսին մտաբերիցէ որ: Ոչ, ոչ այդպէս իցէ, եղբարք պատուականք: Ահա այժմէն իսկ զազազակ հարկանեն առ Չեդ, Վեհափառ Հայրապետ, ուսումնատենչիկ մանկունք Հայաստան ժողովրդոց՝ հազարաւորաց եւ բիւրաւորաց՝ փութալ ի կատարումն գեղեցիկ խոստմանդ, ընդարձակապոյնս յօրինել զընակութիւն ձեմարանիս քանզի նեղ եւ անձուկ է մեզ — գոչեն ամենեքեան — դաստակերտդ գեղեցիկ:

Փարատեցան արդեօք ի տարեւոր ժամանակիս եւ միւս եւս կասկածն երկիւղի՝ թէ գուցէ ծանրութիւն օղոց եւ եղանակիս Վաղարշապատու վնասաբեր լինիցի առողջութեան մանկուոյն, մա-

նաւանդ ի տօթագին աւուրս ամարայնոյ: — Եւ զիսորդ ոչ քանզի ոչ միայն որ բնիկքն են Կովկասական գաւառացրս աշակերտք՝ ի քաջողջութեան վայելեն ահա՛ զերծք յամենայն երկարատեւ խօթութեանց եւ ի պէտպէս ցաւոց վնասակարաց, եւ այն՝ զինի տապախառն եւ ջերմաջերմ՝ աւուրց անգամ ամարայնոյն անցելոյ, այլ եւ որ եկեալքն են ի հեռաւոր աշխարհաց եւ ի հովասուն վայրաց աշակերտք, յՍթաէրխանէ ասեմ՝ եւ յԱսպահանէ, ի Կոստանդնուպօլսոյ եւ ի Ղարաբաղէ, ի Վալրիթէ եւ ի Շամախուոյ, յԱգուլեաց եւ ի Պեսարապիոյ, ի Կիլիկիոյ եւ ի Նորոյն Նախիջեւանէ, ի Տրապիզոնէ եւ յԵւզոկիոյ եւ որ այլքն եւս, միօրինակ ունին աւասիկ քաջողջութիւն եւ զուարթութիւն: Եւ այս եթէ ոչ այնչափ օգոցս բարեխառնութեան թուիցի ումեք շնորհ, որչափ մանաւանդ քաջարթուն խնամոց դաստիարակաց ի վերայ սանուցս մերոց արգասիք, սակայն չիք երկբայութիւն՝ զի զո՛ւր եւ ունայն ամբաստանութիւնքն են որ զանհնարին վնասակարութենէն օգոյ Վաղարշապատու՝ մօրն եղելոյ երբեմն քաղաքաց Արարատեան նահանգիս:

Բայց հօրագոյն քան զառարկուածորդ զայդոսիկ՝ ո՞չ ապաքէն այն էր ի հերուն ի միաս եւ ի բերանս իսկ բազմաց ի մերազնեայ եղբարց տագնապ տարակուսի՝ թէ ո՛ւստ ուստեք հայթհայթեցին արդեօք ուսուցիչք եւ վարժեար՝ որք յօժարիցին կամ բնաւ իսկ մտաբերիցեն այսր եկաւորել՝ յաշխարհքս խոսկանացեալ ըստ բազում գլխոց:

յաշխարհ լոկ եւ թափուր ի յուրից կենցաղական զբօսանաց եւ յօրինաւորն զուարճութեանց, եւ ի կարեւորագունից անգամ՝ կենսական պիտոյից եւ դիւրութեանց: Սակայն տեսաք աւասիկ, տեսանեն եւ ամենեքեան, զի ուրանօր ունիցի զտեղի ի միոյ կողմանէ հեռատեան չափաւորութիւն եւ զգուշաւոր ընտրութիւն՝ համեմատ նախնական պիտոյից այսպիսւոյ ուսումնարանի, եւ ի միւսմէն՝ անձնանուէր եռանդն ճշմարիտ ազգասիրութեան՝ անշէջ մնացեալ տակաւին ի սիրաս ուսումնասէր եւ աշխատասէր երիտասարդաց բազմաց, անդ ոչ դժուարին ինչ է կանգնել զյաղթութիւն ի վերայ խափանարար խոչից այնպիսեաց: Եւ ահա տարեկան յառաջագիմութիւնք աշակերտաց ձեմարանիս յերեսին դասարանս մեր՝ պերճագոյնս քան զամենայն բան ապացուցական երաշխաւորեն ստուգութեան իրացդ: Բայց ազէ եւ զայն տեսցուք միանգամ, զի եկին հասին աւանիկ եւ յուսելոց անախ ի համալսարանս Եւրոպայ՝ արք արդարեւ քաջահմուտք պիտոյից հայկազն մանկուոյն եւ հայասեռ ժողովրդոց կողմանց կողմանց, եւ գիտակք առնել զպարտուպատշաճն ընտրողութիւն ամենայնի որ ինչ առ Եւրոպական ազինս գտանիցին ո՞ճք եւ յեզանակք դաստիարակութեան, եւ մերումն նպատակի վնասին պատշաճեցուցանել: Այսպիսիք ոմանք են ահա Պարոնայքն Յարութիւն Քէշքէկեան՝ ուսուցիչ Վաղվարէն եւ Նատին լեզուաց, Լեւոն Թիւսիկեան՝ ուսուցիչ Գրահաշուի եւ Երկրաչափութեան, Վարդան Աբովեան՝

ուսուցիչ Ռուսացն Գպրութեան եւ պատմութեան Ռուսաց եւ Աշխարհագրութեան Ռուսաստանի, եւ Յովհաննէս Գալստեան՝ ուսուցիչ Հայերէն գպրութեան եւ Թուարանութեան եւ Կարգապահ, չորեքին եւս ի նորումս առ մեզ եկաւորեալք, որոց վաղածանօթն վաստակք լծորդեալք ընդ անխոնջ աշխատութեան եղելոցն արդէն ի ձեմարանիս՝ — որք են Արժանապ. Կիւրեղ Վարդապետ Սրապեան՝ ուսուցիչ Կրօնագիտութեան եւ Թուարանութեան, Պարոնայք Վասակ Պապաջանեան՝ ուսուցիչ Բնական Պատմութեան, Մկրտիչ Պալեան՝ ուսուցիչ Հայկաբանութեան եւ Պատմութեան Մատենագրութեան Հայոց, Ներսէս Սիմեօնեան՝ ուսուցիչ Ընդհանուր Պատմութեան եւ Աշխարհագրութեան եւ գաղղիական լեզուի, Միքայէլ Միքայէլեան՝ ուսուցիչ Ռուսերէն լեզուի, Պօղոս ձէպէճեան՝ ուսուցիչ Չայնագրութեան եւ Պատմութեան Հայոց՝ եւ Տնտես, Առաքել Սագինեան՝ ուսուցիչ Գծագրութեան եւ Նկարչութեան, եւ Մարտիրոս Քէրէսթէճեան՝ ուսուցիչ Վայելչագրութեան՝ եւ Քարտուղար. — քաջ քաջ երաշխաւորեն մեզ, թէ եւ յառաջիկայն եւս յաջողագոյն գտցէ ձեմարանս մեր զարգացումն եւ բարգաւաճանս ցանկալիս:

Թող ուրեմն եւ այնքիկ յիմաստնոց՝ որոց հնչիցեն իմն ականջքն փափկասունք ի լուր իրբու եթէ ահաւորագոչ անուանակոչութեան ձեմարանի եւ նպատակի սորինս եւ գոգ ի զարմանս իմն կրթիցին կամաւորապէս, թող անմուռաց եւ զայս ինչ ունիցին յուշի, զի

ընթացք ուսմանցն յորս պարապեն արդ աշակերտք ի սմա, եւ յորս պարապեսցին գէթ այլ եւս ամս երիս փոխագրեալքն գարդիս ի չորրորդ դասարան, նախաւիչ եւեթ են ձեմարանական դասախօսութեանց. ուստի գուցէ ոչ այնչափ որչափ կարծելին էր՝ կարօտանան արդեօք առաջնոց ոմանց ի քաջահամբաւ վարժապետաց պսակաւորելոց ի համալսարանս Եւրոպայ:

Այլ եւ կամէի թէ գիտիցեն այժմէն այնպիսիքն զոր ինչ Ձերդ Վեհափառութիւն վսեմախոհ եւ յառաջատես ինամարկութեամբ եղեալ է արդէն ի մտի, այն է զընտրելագոյնսն ըստ ամենայն գլխոց յուսումնաւարտ աշակերտաց վեցերորդի գատարանին առաքել ի դէպ ժամուն ի համալսարանս Եւրոպայ ծախիւք ձեմարանիս, որպէս զի անդանօր զամս երկուս կամ երիս կատարելագործեալք ի պէտպէս մակացութիւնս եւ ի հմտութիւնս՝ դարձ այսրէն առնիցեն, եթէ հնար է՝ մէն մի Խորենացիք եւ Եղիշայք եւ Եգնիկք եւ Ղազարիկք, եւ վարժապետիցեն այնուհետեւ յաղգայնումս ձեմարանի՝ չափաւորապէս վարձու շատացեալք:

Մատուցեալ արդ յո՞՞ եւ յեղանակ հանրական ընթացից ձեմարանիս յանցելումս տարեկան շրջանի, արժան համարիմ նախ զնիւթականացն պիտոյից մատակարարութենէ խօսել համառօտիւ:

Մնունդ եւ հանդերձք եւ ամենայն արտաքին պէտք աշակերտաց ձեմարանիս՝ մատակարարին սոցա Ձերուղխոհական վերագիտողութեամբ եւ

հայրական խնամարկութեամբ առատապէս, եւ միանգամայն ճշգրիտ պահպանութեամբ տնտեսականին խնայութեան կանոնաց, ի Վանքական անուանեալ Կառավարութենէն, ազատս զմեզ կացուցանելով այսու ի դրամականացն հաշուատուութեանց հասիցն եւ ծախուց. որով ի միոյ կողմանէ չտեսանի ինչ թերութիւն եւ ոչ մի յանկարծոն պահպանութիւն սանուցդ, եւ ի միւսմէն ճշգրիտ ըստ կարի եւ ի բաց պարուրին ծախք աւելորդք, առանց զանց առնելոյ եւ գյաւելուածով շինութեանց կարեւորաց առ նորակառոյց ձեմարանաւս, որպիսի են լուացարանն ընդարձակ եւ հիւանդանոցդ վայելչակերտ: Հաշուեմատեանք ծախուցն եղելոց յայսրմ՝ ամի ակներեւ ցուցանեն աւանիկ զբանիցս ստուգութիւն, եւ յուսադիր մեզ լինին՝ աներկբայապէս, զի ուրանոր զուգրնթաց միմեանց գտանիցին անխարդախ հաւատարմութիւն եւ անշահասէրն տնտեսութիւն, անդ ոչ սակաւ խնայութիւն ի ծախս գործի, եւ յաւելուած ազգաշահ օգտից:

Իսկ հասըն կամ մուտք ուսումնարանիս մեծի՝ հանդերձեալք են բազմիմաստ հանճարով Ձերոյ Վեհափառութեանդ՝ գլխաւորապէս ի շահուց անտի մեծագումար դրամագլխոյն պատրաստելոյ ի գնոց տպագրեալ գրեկոյ եւ ի նուիրաբերութեանց բարեպաշտ իշխանաւորաց եւ ժողովրդոց, եւ յանուանէ՝ յառատաձեռն նուիրանաց մտնջենական եւ ժամանակաւոր բարերարաց եւ սատարաց ձեմարանիս, զորոց քաղցր է մեզ յիշատակ առնել

զանուանց ազգասիրացն ճշմարտից յաւուրս հանդիսի: Քանզի բաց ի հանգուցելոցն ի Քրիստոս՝ ի բարեյիշատակ Կարսպետէ Արքեպիսկոպոսէ յԱռաջնորդէն Կարնոյ եւ Տփլիսեաց, ի Գէորգայ Մանուկեան Կալկաթացւոյ, յԱկիւլինեայ Ալաճալեան Նոր Նախիջեւանեցւոյ, եւ ի Կարապետէ Թիլքիեան Գրիգորուպօլսեցւոյ, — որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, — արժանաւորք մերոցս շնորհակալեաց գտանին Սոփիա տիկին Չավչավածէ Տփլիսեցի, Յովհաննէս Ստեփանեան Յովնանեանց, քաղաքացիք Նորոյն Նախիջեւանի, Ղլարայ եւ Մոզտոքի, Սուլթան տիկին Մելիք-Բէկլարեանց Տփլիսեցի, Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալեանց, Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեան, Եսայի Իզմիրեանց Ղլարեցի, Բարեգործական ընկերութիւնք Հայոց Նոր Նախիջեւանի եւ Բագուայ*), Մկրտիչ Սանասարեանց, եւ Յովհաննէս Մուրատ իշխան Մանուկ Պէյ, յորոց ոմանք դրամագլուխս հաստատուես նուիրեցին ի նպաստ ձեմարանիս, ոմանք զտոկոսիսն միայն, եւ այլք եւս միանուագ օժանդակութեամբ հազորդք եղեն այսմ՝ աստուածահաճոյ բարերարութեան:

Բայց ես փութամ ճեպլիմ զգաստիարակութենէ մանկուոյն մերոյ ասել բան հակիրճ եւ համառօտ, ոչ ինչ խէթ կասկածանաց ի մտի ունելով՝ թէ յաչս

(*) Կ. յուսալք՝ զի Ն. Նախիջեւանի Բարեգործական և Բագուայ Մարդասիրական ընկերութիւնք ևս կփութան արդիւնաւորել խրեանց բարի մլտազրութիւնը և իղձերը:

ումանց ի քննասիրացն եւ ի պարսաւա-
դիտաց զանձնասէր ծնգոտի եւ զանո-
տիապարծ մարդոյ տայցեմ՝ զանձնէ
զկարծիս. — բայց ասացից զիրաւունս:

Վեհափառ Հայրապետ, ըստ Ձերու մզ-
խակ պաշտելի հրամանաց՝ հիմն եւ հաս-
տատութիւն տաճարիդ իմաստութեան
ղերկիւղն Աստուծոյ եւ զոգի աստուած-
պաշտութեան գիտելով՝ հանդերձ ող-
ջամիտ բարոյականութեամբ, զամենայն
ջան եւ զփոյթ ի կիր արկեալ է մեր՝ զի
կանոնքն բարեկարգութեան եւ համո-
րէն ամենայն առաքինութիւնք եկեղե-
ցական եւ քաղաքական կենցաղաւա-
րութեան օր ըստ օրէ բարգաւաճեալ
ծաղկեսցին ի սմա: Եւ թէ որչափ ինչ
կամ որպիսի գտեալ իցեմք յայսմ՝
Տեառն շնորհիւ յաջողութիւն, եթէ ոչ
տարապայման ինչ գրեսցի ինձ վստա-
հութիւնս՝ համարձակիմ գուարթա-
միտ ոգւով տալ վկայութիւն, զի հիմ-
նաւորն հոգեսիրութիւն՝ հեռի յամե-
նայն կեղծաւորութենէ՝ լծորդեալ ընդ
անյեզլի հաւատարմութեան առ Հա-
յաստանեայցս սուրբ Եկեղեցի, եւ ընդ
անգրդուելի հարազատութեան առ
Մայր Աթոռս մեր՝ հանդերձ երախտա-
գէտ զգացմամբ առ արժանաժառանգ
Հայրդ հասարակաց, առ բազմարդիւն
Հիմնադիրդ ձեմարանիս, ոչ զազփաղ-
փուն ինչ կանգաղեալք են, այլ արմա-
տըս ի խոր ձգեալ անդստին յառաջնմէ
իսկ տարւոյ ի սիրոս մատաղերամ՝ ման-
կըտուոյդ՝ անուամնաձիգ բողբոջս զուար-
թարարս տեսանելեաց այժմէն իսկ ար-
ձակեն: Հանրական իմն ասեմ ջանա-
սիրութիւն անխոնջ, որով ի կրկնակի

հանդէսս հարցաքննութեան՝ ի սկիզբն
Յունիսի եւ ի վերջին աւուրս Օգոստոսի
տարւոյս՝ ոչ բերկրութեան եւեթ եղին
մեղ առ իմք, այլ եւ ոչ սակաւ զարմա-
նաց, եւ յառաջիկայսն՝ մեծաց յուսից
ակնկալութեան:

Արդարեւ իսկ տեսաւ յայտնապէս
ի հարցաքննութիւնս անդ՝ զի առաւե-
րագոյն իմն եւ գոգցես անակնկալ գոր-
ծեալ են դռքա յառաջագիմութիւն ի
վարժս Հայկաբանութեան, ոչ ի գիր
միայն՝ այլ եւ ի բան եւ ի գրոյց ի գրոցն
մեր բարբառ պատուական՝ ճոխ եւ
պատկառելի: Քաջախարժք հանդիտա-
ցան եւ ի թուաբանականին գիտու-
թեան՝ քաջահմուտ վարժապետու-
թեամբ ուսուցչին իւրեանց, արիացեալ
են եւ ի յաղթել սկզբնական դժուա-
րութեանց ուսման կարեւորագունին
մեզ Ռուսացն լեզուի, եւս եւ Քաղղիա-
կանին: — Պատմականքն եւ Աշխարհա-
գրական հմուտութիւնք՝ հանդերձ սկզբ-
բամբք Բնական պատմութեան՝ յեր-
րորդումն դասարանի գոգցես աւար-
տեալք, իսկ յառաջնումն եւ յերկրոր-
դին իբր ի կէս հասեալք՝ պատրաստեալ
գտանին զսանս ձեմարանիս ի ճոխա-
գունիցն ըստ այսոցիկ մասանց գիտու-
թիւնս:

Թէ որքան ի վայելչագրութեան եւ ի
Քճագրութեան եւ Նկարչութեան ա-
րուեստս իցեն զարգացեալք՝ տեսանի
աւանիկ ի շարս անդ աշխատութեանց
սոցին ի հանդիտարանի ձեմարանիս. եւ
Ձայնագրութեանն նորոյ չքնաղ ա-
րուեստի հրահանգաց այնչափ տիրա-
ցեալ են երրորդի դասուն աշակերտք՝

Հանդերձ ուսմբք յերկրորդէն եւ յառաջնոյն, զի զուժեսին զձայնս շարականաց եւ զշարձուածս նոցին սերտ ի մտի ունելով՝ կարող են երգել անսայթաք զղժուարագոյնսն անգամ յեղանակաց, եւ նորանորս եւս ձայնագրել սաղս եւ երգս ըստ Հաճոյից թելագրողացն, եւ երգել Համարձակ:

Աստանօր արժան էր արդեօք ընդ անուանց միոյ միոյ յաշակերտացն եւ զուսմունսս նոցին ի մէջ բերել, եւ ասել թէ ո՛վ ոք յորձմբ բաժնի գիտութեանցն եւ լեզուաց առաւելապէս քաջացաւ ի հարցաքննութեան ժամանակսրն. այլ զի մի ծանրատաղտուկ լսելեաց գերյարգոյ ունկնդրացս զբանս իմ առնիցեմ, շատ գրեմ առ տեղեալս զանուանցն եւ եթ առնել յիշատակութիւն, առաջնակարգն եւ յոյժ գովելն զայնոսիկ ընծայելով՝ որք Հանդերձ անսոգիւտ վարուքն եւ գնացիւք միանգամայն գրեա թէ յամենայն իսկ ի մասունս ուսմանցն անվրէպ ճշգրտութեամբ վկայեցան քաջավարժք, եւ լիաբերան գովութեան եւ մրցանակաց արժանաւորք: Եւ երկրորդակարգն եւ գովելն զթերացեալան փոքր ի շատէ ի տարեկան ընթացս ուսմանցն եւ ի հարցաքննութիւնս: Ըստ այսմ Առաջնակարգ աշակերտք յոյժ գովելիք վկայեցան, եւ այսպիսիք ոմանք գտան յառաջնումն Դասարանի:

- Յովհաննէս Թամազեան ի Ստաւրոփոլ:
- Նիկողայոս Քարամեան ի Շամսխոյ:
- Սիմէոն Փիլիպպոսեան յԱսպահանէ:
- Հայրապետ Պօղոսեան ի Գավրիժէ:
- Աբրահամ Զամինեան ի Նոր Նախիջեանէ:
- Տիգրան Ասրանեան յԵրզնկոյ:

- Ռափայէլ Գրիգորեան ի Գավրիժէ:
- Գրիգորիս Փափազեան ի Վան քաղաքէ:
- Բարձուղիմէոս Սուքիասեան յԱշտարակէ:
- Համբարձում Սաֆարեան ի Գարբանդայ:

Երկրորդակարգ աշակերտք գովելիք ի նմին Դասարանի.

- Յակօր Պէքեարեան յԱնձապէ Կիլիկիոյ:
- Վահան Մինասեան ի Վաղարշապատէ:
- Տիգրան Սաֆարեան ի Նոր Արմաւիրէ:
- Առաքել Վարդանեան ի Վաղարշապատէ:
- Գէորգ Այվազեան յԱլիւրէկոս զեղջէ:
- Ալեքսան Բաժանեան ի Վաղարշապատէ:
- Խաչատուր Թաղէոսեան ի Մաստարա զեղջէ:
- Արշակ Էտիլեան ի Քարվանսարայէ Ղաղախու:
- Գէորգ Մինասեան ի Պաթումէ:
- Մելքոն Արմաբէշեան յՕրպազարէ Խրիմու:
- Մկրտիչ Արէլեան ի Վաղարշապատէ:

Ընդ ամենայն աշակերտք քսան եւ մի, որք եւ ի սկիզբն ուսումնական տարւոյս փոխադրեցան յԵրկրորդն դասարան:

ՅԵրկրորդում Դասարանին զառաջինսն կալան զտեղիս ի յառաջագիմութեան ասպարիսին Առաջնակարգք եւ յոյժ գովելիք:

- Սարգիս Տէր Գաբրիէլեան ի Քոնձայիսէ:
- Թաղէոս Զաքարեան ի Շամսխոյ:
- Կարապետ Տէր Մկրտչեան յԱզուլեաց:
- Հմայեակ Խուչպուլեան ի Տրապիզոնէ:
- Միսաք Ասիլեանց ի Վաղարշապատէ:
- Միրայէլ Աստուածատրեան յԱզրիւմանէ:
- Ենովք Կէօնճեան եւ
- Պօղոս Տէր Պօղոսեան յԱղեքսանդրապօլսոյ:
- Յովհաննէս Անդրիցեան յԱժտերիսանէ:
- Համբարձ. Ստամպոլցեան յԱղեքսանդրապօլսոյ:
- Աւետիս Զարկարեան յԱզուլեաց:
- Յովհաննէս Առաքելեանց ի Հին Նախիջեանէ:
- Գալուստ Թումանեան ի Մոզորթէ:
- Պօղոս Սահակեան եւ
- Հայրապետ Սոնիաննոսեան ի Տիլիսեաց:

Գէորգ Տէր Բարձուղիմէոսեան ի Պրուսայէ.
Յովհաննէս Տէր Գառնեան յԱղբիրմանէ.

Եւ Երկրորդակարգ աշակերտք գովելիք.

Սահակ Յարութիւնեան ի Կ. Պօլսոյ.
Յարութիւն Ալիազեան յԱլիքէկու զեղջէ.
Գրիգոր Թառուսեան ի Շուշուոյ.
Գալուստ Տէր Խաչատրեան ի Զալթր զեղջէ
Նոր Նախիջեւանի.

Վարդան Տէր Մկրտչեան ի Վաղարշապատէ.
Ստեփաննոս Տէր Անտոնեան յԵրեւանէ.
Վահան Շահինեան ի Կէջրու զեղջէ.
Միքայէլ Տէր Գարրիշեան ի Սասիսերէթ ա-
ւանէ, եւ

Թադէոս Տէր Մանուէլեան ի Բլուր զեղջէ.

**Ընդ ամենայն աշակերտք քսան եւ վեց,
եւ սորա յերրորդն փոխեցան Գասարան:**

**Իսկ որք յերրորդի դասուն յառա-
ջադէմք հանդիսացան՝ ի եւ յոյժ գովե-
լիք՝ սորա են.**

Գարրիէլ Առաքելեան ի Ղզլարէ.
Կոստանդին Մելիք Շահնազարեան եւ
Սիմէոն Հախումեան ի Շուշուոյ.
Ստեփաննոս Մախասեան
Գալուստ Տէր Մկրտչեան եւ
Հմայեակ Սողոմոնեան յԱխալցիսայէ.
Մինաս Պանճուլազեան ի Ղզլարէ.
Նիկողայոս Տէր Աւետիսեան ի Շուշուոյ.
Գէորգ Խանըմեան եւ

Սերովբէ Սամարցեան ի Նոր Նախիջեւանէ.
Մուշեղ Մամիկոնեան
Յարութիւն Պահլաուէի եւ

Սեդրաք Գրիգորեան յԱղբրամանդրապօլսոյ.
Աղբրամանդր Շաւարշեան յԻգտիրէ.

Երկրորդակարգ աշակերտք գովելիք.

Մկրտիչ Զարարեան եւ
Ստեփան Մկրտչեան յԵկտիրէ.
Բաղդասար Մելիքեան ի Ղզլարէ, եւ
Յովակիմ Իգրաշեան ի Շուշուոյ.

**Ընդ ամենայն աշակերտք երիցագոյնք
ու թեւտանն, որք եւ փոխադրեցան ի նոր
դասարան Զորորդ: Եւ այսպէս մնան այլ**

եւս Գասարանք երկու, որ բացցին յամ-
սըն 1877 եւ 1878, եւ ապա այնուհե-
տեւ սկիզբն արասցի ձեւարանականացն
բաժնից, յորս դասախօսու թիւնքն ե-
ղիցին՝ ոչ եւս սովորական կամ Գլորո-
ցական ոճով: այլ մանաւանդ իբրու ա-
տենախօսութիւնք վարդապետականք
զպէսպէս գիտելեաց, զուսումնակա-
նաց եւ զբանասիրականաց:

Իսկ յորոց մնացինն առ տխեղծ հա-
տակացն չներելոյ՝ ի նորումս յառաջ-
նում՝ դասարանի յոյժ գովելի աշա-
կերտք՝ սորա են.

Արշակ Գէորգեան ի Տաշղալա զեղջէ Աղբ-
սանդրապօլսոյ.
Ստեփաննոս Թորոսեանց յԱպահանէ.
Մանուկ Խաչատրեան յԱստապատէ.
Ներսէս Պօսնեան յԱնճապէ Կիլիկիոյ.

Եւ ի սոսա յաւելան զարդիս նորեկ ա-
շակերտք քսան եւ չորք, առհասարակ
ընկալեալք յԱ Գասարան, եւ երկուքն
յերկրորդ եւ յերրորդ:

Արդ ի տես եւ ի լուր այսքանոյ յու-
սապատար խնդութեան ընդ արգասիս
օրհնութեան Վեհիդ եւ աղօթից սըր-
բոյ Ուխտիս միաբանութեան, որպէս եւ
անդուլ ջանից վարժապետացն մերոց
եւ աշակերտաց, ներեսցէ ինձ Ձերդ
Վեհափառութիւն թուլչս արձակել առ
վայր մի մտացս թեւօք, եւ վերասլա-
ցեալ ի լուսափայլ գագաթն մեծի լե-
րինդ Մասեաց, ի Հայկազնեանդ ասեմ
Ողիմպոս, շուրջ յաճել զականողիս ի
կայս եւ ի կոյս արեւելից եւ արեւմը-
տից, հիւսիսոյ եւ հարաւոյ, եւ իբր ի
պատկերի մեծի զԳէորգեանս ձեւարան
մատնանիշ ցուցանելով որդւոց Հայաս-
տանի որ ի սփիւռս իցեն՝ քարոզ կար-

դալ առ նոսա եւ ասել. Մանկունք
 Հայաստանի, որդիք սիրասունք Վեհա-
 փառ Հայրապետիս մերոյ Գէորգայ Գ,
 զարթիք ի ձերմէ մահահանգոյն թըմբ-
 բութենէզ յուսահատութեան, յոր
 ընկզմեալ կայք յամաց բազմաց հեռէ,
 մոռացօնս գործեցէք վայրիկ մի աղե-
 աիցն մեծաց զորս կրեցէքն եւ սպառե-
 ցէք. սրբեցէք զարատուս յաջաց ձե-
 րոյ: եւ տեսէք զակնկալութեանցն ձե-
 րոյ նշոյլս պայծառապէս փայլատա-
 կեալ առ տեղեօքն՝ յորս կոխեցին լու-
 սաշաւիղ՝ ոտք Նահապետին Նոյի եւ
 Նուսաուրիցն ազգիս Գրիգորի Պարթեւի
 եւ Ներսիսի մեծի, եւ Սահակեանցն եւ
 Մեսրոպեանց, եւ զմայլեալք բաժակաւ
 անտրտում ուրախութեան՝ եկայք
 խառնեցէք զձայնս հրճուանաց ձերոց
 ընդ բարեբանութեանց մերոց յորդոր-
 մունս եւ օրհնեցէք զսկզբնապատճառն
 այսմ բարեաց:

Հապա, օրհնեցէք, որդիք շնորհա-
 պարոք, զբարեխնամն ձեր Հայրապետ
 ի բարենշան յայսմ տարեկանի, ի մե-
 ծաշուք հանգիսի տօնական աւուրս
 սրբոյն Գէորգայ քաջայաղթ զօրալա-
 րի: Մաղթեցէք Անուանակցի նորին
 կեանս երկարաձիգս, զի եւս քան զեւս
 զուարճացի ի տեսիլ բարգաւաճելոյ
 իւրումն ձեռակերտի ընդ մեծազօր հո-
 վանաւորութեամբ Օգոստափառ Կայ-
 սերն Ռուսաց, եւ աստատին վայելիսցէ
 ընդ ամն բազումս ի յոգնաբեղուն ար-
 դիւնս բարեաց օժտելոց յիւրմէն ի
 փառս եւ ի պայծառութիւն Հայաս-
 տաննայցս եկեղեցւոյ եւ Ազգի:

Հետեւեալ երկու ուղերձներէն մինը
 ի գիմաց աշակերտաց ձեմարանի՝ եւ
 միւսը ի գիմաց աշակերտուհեաց Ծխ-
 Օրիորդաց Դպրոցին Վաղարշապատու
 կարգացուեցան Վեհարանում:

ԱՌ

ԱՍՏՈՒԵՆԱԳՍԵԿ ՎԵՀԱՓՈՒ

Տ, Տ, ԳԷՈՐԳ Գ,

Ոգիզ անմահ, որ ի բարձանց հայրենաց
 Աւետուոր դիմեալ ի ձայն հրճուանաց
 Գաս տարփողել մեզ ցընծութիւն անըսպառ.—
 Ողջամբ գալուստ քո ի տաճարս վեհապայր:

Զայդ գեղանի լուսաճաճանչ դու պարզես,
 Նոր առաւօտ՝ նոր օր կենաց ծագէ մեզ,
 Հայրապետիս մերոյ աւուրք գեղաճին
 Գեղափըթիթ բողբոջեն փառքս կըրկին:

Դու զՎեհին մեր անուան չքքնող յեշտակ
 Հանգոյն շողեց զօր մեզ սրբուէ արեգակ
 Զարթուցանես ի սիրտ ի քնարս ոսկելար,
 Վեհիս հանդէպ խայտայ որդւոց իւր կաճառ:

Յօրչափ ցընծան լերինք Հայոց ծաղկածին
 եւ շողշողն աստեղք պայծառ ի յերկին,
 Որդւոց երամբ բողբոջեցեն պեճս պըսակ
 ի բիւր ծաղկանց նըմին դունակըս դունակ:

Մաղթեմք, սկ Հայր, ի փառս ազգիս քո հօտին
 երկարեցին աւուրք կենացըք քոյին,
 Զայս ի սըրտէ յաւուր պաշտպան Բո Սըբբոյ
 Միաբարբառ հանմբ առ Տէր ձօն սիրոյ:

ԶԵՐՈՒՄԳ ՎԵՀԱՓՈՒՈՒԹԵԱՆ

Ամենախոնարհ որդի եւ աշակերտ Չորրորդ դասարանի
 Գեորգեան ձեմարանի
 ՍԻՄԷՈՆ ՀԱԽՈՒՄԵԱՆՅՑ.